ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 06/2019

ք. Երևան **06.03.2020թ.**

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Հ. Հարությունյանի, Լ. Ալեքսանյանի, Ա. Փաշինյանի, Ն. Համբարձումյանի (այսուհետ՝ Հանձնաժողով),

2020թ. մարտի 3-ին քննելով Երևանի քաղաքապետ Հայկ Մարությանի նկատմամբ 2019թ. դեկտեմբերի 9-ին հարուցված «Անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման վերաբերյալ» վարույթի գործը.

ՊԱՐԶԵՑ

I. Գործի նախապատմություն

1. 2019 թվականի դեկտեմբերի 05-ին armlur.am, yerevan.today, antifake.am, tert.am, 168.am, news.am, zham.am և մի շարք այլ ինտերնետային լրատվամիջոցներ, հղում կատարելով «Ժողովուրդ» օրաթերթին, հրապարակել են «Հայկ Մարությանը շուրջ 1 տարի օրենք է խախտել», «Հայկ Մարությանն ու «Երկուս ու կես»-ը. քաղաքապետի օրինախախտումը բացահայտված է» և այլ վերնագրերով հոդվածներ՝ մասնավորապես նշելով, որ Հայկ Մարությանն իր պաշտոնավարմանը զուգահեռ նաև «Երկուս ու կես» ՍՊԸ-ի տնօրենն է, և 2018-ի հոկտեմբերի 13-ին պաշտոնը ստանձնած Մարությանը զուգահեռ տնօրինել է իր ՍՊԸ-ն:
2. Հանձնաժողովն ուսումնասիրել է Հայկ Մարությանի կողմից 2018թ. ներկայացված պաշտոնատար անձի պաշտոնեական պարտականություններն ստանձնելու կամ դադարեցնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց հայտարագիրը և առկա տվյալները համադրել ՀՀ իրավաբանական անձանց էլեկտրոնային ռեգիստրից ստացված տեղեկատվության հետ, որի արդյունքում պարզվել է, որ Հայկ Մարությանը

հանդիսանում է «ԿԱՐԳԻՆ ՍՏՈՒԴԻԱ» ՍՊԸ, «ԿԱՐԳԻՆ ԹԻՎԻ» ՍՊԸ և «ՀԱՅԿՈ ԸՆԴ ՄԿՈ «ԿԱՐԳԻՆ» ՍՊԸ բաժնետեր:

3. 2019թ. դեկտեմբերի 9-ին Հանձնաժողովը կայացրել է «Երևանի քաղաքապետ Հայկ Մարությանի կողմից անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման հիմքով վարույթ հարուցելու մասին» թիվ 06/2019 որոշումը:
4. 2019թ. դեկտեմբերի 12-ին Երևանի քաղաքապետ Հայկ Մարությանը թիվ 01/04-27007 գրությամբ ներկայացրել է բացատրություն և ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից տրված «Երկուս ու կես» ՍՊԸ-ի պետական գրանցման արխիվային գործում առկա որոշումը, որի համաձայն Հայկ Մարությանի լիազորությունները որպես «Երկուս ու կես» ՍՊԸ-ի գործադիր մարմնի ղեկավար դադարեցվել է 2018 թվականի հոկտեմբերի 10-ին:
5. 2019թ. դեկտեմբերի 26-ին Հանձնաժողովը գրությամբ դիմել է «Ժողովուրդ» օրաթերթին՝ խնդրելով տրամադրել այն փաստաթղթերը, որոնք հիմք են հանդիսացել հրապարակման համար:
6. 2019թ. դեկտեմբերի 16-ին «ՀԱՅԿՈ ԸՆԴ ՄԿՈ «ԿԱՐԳԻՆ», «ԿԱՐԳԻՆ ՍՏՈՒԴԻԱ», «ԿԱՐԳԻՆ ԹԻՎԻ» ՍՊԸ-ների լուծարային գործընթաց է սկսվել:
7. 2019թ. դեկտեմբերի 26-ին թիվ Ե-021 գրությամբ Հանձնաժողովը պարզաբանում է պահանջել Հայկ Մարությանից՝ «ԿԱՐԳԻՆ ՍՏՈՒԴԻԱ» ՍՊԸ-ում, «ԿԱՐԳԻՆ ԹԻՎԻ» ՍՊԸ-ում և «ՀԱՅԿՈ ԸՆԴ ՄԿՈ «ԿԱՐԳԻՆ» ՍՊԸ-ում ունեցած բաժնեմասերի և (կամ) դրանք հավատարմագրային կառավարման հանձնելու, ընկերություններում Հայկ Մարությանի կողմից պաշտոններ զբաղեցնելու և ընկերությունների լուծարման գործընթացում գտնվելու վերաբերյալ:
8. 2020թ. հունվարի 14-ին Հայկ Մարությանը ներկայացրել է բացատրություն, որի համաձայն՝ «ԿԱՐԳԻՆ ՍՏՈՒԴԻԱ» ՍՊԸ-ն փաստացի գործունեություն չի իրականացրել 2009 թվականի փետրվարի 16-ից, «ՀԱՅԿՈ ԸՆԴ ՄԿՈ «ԿԱՐԳԻՆ» ՍՊԸ-ն՝ 2009 թվականի փետրվարի 13-ից, և «ԿԱՐԳԻՆ ԹԻՎԻ» ՍՊԸ-ն՝ 2013 թվականի դեկտեմբերի 1-ից: Հայկ Մարությանը բացատրության մեջ նշել է, որ այս ընկերությունները չունեն որևէ գույք կամ դրամական միջոցներ: Համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի՝ գույքի հավատարմագրային կառավարման պայմանագրով մեկ կողմը (կառավարման հիմնադիրը) որոշակի ժամկետով գույք է հանձնում մյուս կողմի (հավատարմագրային կառավարչի) հավատարմագրային կառավարմանը, իսկ մյուս կողմը պարտավորվում է այդ գույքի կառավարումն իրականացնել ի շահ կառավարման հիմնադրի կամ նրա նշած անձի (շահառուի): Տվյալ դեպքում, ընկերության բիզնես գրավչության բացակայության պարագայում դրա բաժնեմասերը հավատարմագրային կառավարման վերցնելու հնարավորությունը զուտ ձևական հարթությունում է:

9. 2020թ. հունվարի 24-ին Հանձնաժողովը գրությամբ դիմել է ՀՀ պետական եկամուտների կոմիտե՝ խնդրելով տրամադրել տեղեկություն, թե արդյոք «Կարգին Ստուդիա», «ՀԱՅԿՈ ընդ ՄԿՈ «Կարգին» և «Կարգին Թիվի» ՍՊ ընկերություններն օրենքի ուժով ենթակա են եղել լուծարման, և եթե ոչ, ապա՝ ինչ պատճառաբանությամբ:
10. 2020թ. փետրվարի 5-ին ՀՀ Պետական եկամուտների կոմիտեն պատասխան գրությամբ տեղեկացրել է, որ «Կարգին Ստուդիա» ՍՊԸ-ն, «Հայկո ընդ Մկո» ՍՊԸ-ն և «Կարգին» ՍՊԸ-ն վերջին անգամ հարկային մարմին հաշվետվություն են ներկայացրել 2013 թվականի ապրիլի 15-ին (շահութահարկի հաշվարկ), իսկ «Կարգին Թի Վի» ՍՊԸ-ն վերջին հաշվետվությունը ներկայացրել է 2014 թվականի ապրիլի 15-ին (շահութահարկի հաշվարկ): «Կարգին Թի Վի» ՍՊ ընկերությունը 2017 թվականի հունվարի 1-ի դրությամբ ունեցել է նաև 42998 ՀՀ դրամ հարկային պարտավորություն: «Հարկային հաշվետվություններ չներկայացրած կազմակերպությունները լուծարելու և անհատ ձեռնարկատերերին պետական հաշվառումից հանելու մասին» 2016թ. դեկտեմբերի 16-ի ՀՕ-260-Ն ՀՀ օրենքի համաձայն նշված կազմակերպությունները չեն լուծարվել, քանի որ նշված բոլոր ընկերությունների մասով բավարարված չի եղել նույն օրենքի 1-ին հոդվածով սահմանված պայմանը՝ 2013թ. հունվարի 1-ից մինչև 2017թ. հունվարի 1-ը ընկած ժամանակահատվածում հարկային հաշվետվությունները ներկայացրած չլինելը, իսկ «ԿԱՐԳԻՆ ԹԻՎԻ» ՍՊ ընկերության մասով առկա է եղել չմարված հարկային պարտավորություն:
11. 2020թ. մարտի 5-ի գրությամբ Հայկ Մարությանը տեղեկացրել է, որ «Երկուս ու կես», «Կարգին Ստուդիա» և «Հայկո ընդ Մկո «Կարգին» ՍՊԸ-ների լուծարման գործընթացն ավարտվել է: «Կարգին Թիվի» ՍՊԸ լուծարման գործընթացն ընթացքի մեջ է:

II. Գործի քննության ընթացքում հաստատված հանգամանքները

12. 2018թ. սեպտեմբերի 23-ի Երևանի ավագանու ընտրությունների արդյունքներով 2018թ. հոկտեմբերի 10-ի Երևան քաղաքի ավագանու 1-ին նիստի ժամանակ Հայկ Մարությանը դարձել է Երևանի քաղաքապետ:
13. 2018թ. պաշտոնն ստանձնելու գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց հայտարարագրում Հայկ Մարությանը հայտարարգրել է «ԿԱՐԳԻՆ ՍՏՈՒԴԻԱ», «ԿԱՐԳԻՆ ԹԻՎԻ» և «ՀԱՅԿՈ ԸՆԴ ՄԿՈ «ԿԱՐԳԻՆ» ՍՊԸ-ներում բաժնեմաս ունենալու փաստը:
14. 2018թ. հոկտեմբերի 9-ին «ԿԱՐԳԻՆ ԹԻՎԻ» ՍՊԸ-ի արտահերթ ընդհանուր ժողովի որոշմամբ դադարեցրել են ընկերության տնօրեն Հայկ Մարությանի լիազորությունները:

15. 2018թ. հոկտեմբերի 12-ին «ՀԱՅԿՈ ԸՆԴ ՄԿՈ «ԿԱՐԳԻՆ» ՍՊԸ-ի արտահերթ ընդհանուր ժողովի որոշմամբ դադարեցվել են տվյալ ընկերության տնօրեն Հայկ Մարությանի լիազորությունները:
16. Պաշտոնը ստանձնելուց հետո Հայկ Մարությանը «ԿԱՐԳԻՆ ՍՏՈՒԴԻԱ», «ԿԱՐԳԻՆ ԹԻՎԻ» և «ՀԱՅԿՈ ԸՆԴ ՄԿՈ «ԿԱՐԳԻՆ» ՍՊԸ-ների իր բաժնեմասը հավատարմագրային կառավարման չի հանձնել, ինչը հաստատվել է նաև այն փաստով, որ Հայկ Մարությանը համապատասխանաբար՝ 06.12.2019թ., 06.12.2019թ. և 16.12.2019թ. կայացրել է գործունեությունը դադարեցված նշված ընկերությունները լուծարելու վերաբերյալ որոշումներ և դիմում է ներկայացրել ՀՀ ԱՆ իրավաբանական անձնաց պետական ռեգիստր՝ լուծարման գործընթաց սկսելու համար:
17. «ԿԱՐԳԻՆ ՍՏՈՒԴԻԱ» ՍՊԸ-ն, «ԿԱՐԳԻՆ ԹԻՎԻ» ՍՊԸ-ն, «ՀԱՅԿՈ ԸՆԴ ՄԿՈ «ԿԱՐԳԻՆ» ՍՊԸ-ն թեև պետականորոն գրանցված են եղել որպես առևտրային կազմակերպություններ, սակայն Հայկ Մարությանի կողմից քաղաքապետի պաշտոնը ստանձնելու պահին և դրանից հետո ընկած ժամանակահատվածում փաստացի գործունեություն չեն իրականացրել և որևէ շահույթ, եկամուտ չեն ապահովել:
18. 2020թ. մարտի 4-ին «ՀԱՅԿՈ ԸՆԴ ՄԿՈ «ԿԱՐԳԻՆ» » ՍՊԸ-ն և «ԿԱՐԳԻՆ ՍՏՈՒԴԻԱ» ՍՊԸ-ն լուծարվել են:

III. Եզրակացության ընդունման իրավական հիմքերը

19. Հանձնաժողովը հարկ է համարում ներկայացված փաստերը և դրանց վերաբերելի իրավակարգավորումները վերլուծել օրենքի *ձևական և բովանդակային տեսանկյունից*, որպեսզի պահպանվի կիրառվող օրենքի և դրա կողմից հետապնդվող նպատակի միջև համարժեք հարաբերակցությունը: Մասնավորապես՝ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի համաձայն՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները չեն կարող զբաղեցնել իրենց կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում, որևէ պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից: Նույն հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում մասնակցություն (բաժնեմաս, բաժնետոմս, փայ) ունենալու դեպքում հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները պարտավոր են պաշտոնում նշանակվելուց (ընտրվելուց) հետո մեկ ամսվա ընթացքում այն օրենքով սահմանված կարգով հանձնել հավատարմագրային կառավարման:

20. 2018թ. հոկտեմբերի 10-ից Հայկ Մարությանը հանդիսացել է համայնքային քաղաքական պաշտոն զբաղեցնող հանրային ծառայող, և նրա գործունեության նկատմամբ տարածվում են Օրենքի 10-րդ և 31-րդ հոդվածների կարգավորումները: Օրենքի համաձայն՝ Հայկ Մարությանը պարտավոր էր «ԿԱՐԳԻՆ ՍՏՈՒԴԻԱ», «ԿԱՐԳԻՆ ԹԻՎԻ» և «ՀԱՅԿՈ ԸՆԴ ՄԿՈ «ԿԱՐԳԻՆ» ՍՊԸ առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում մասնակցությունը հանձնել հավատարմագրային կառավարման: Այնուամենայնիվ, այդ ընկերությունները փաստացի գործունեություն չեն իրականացրել, և այդ հիմքով Հայկ Մարությանը հավատարմագրային կառավարման չի հանձնել:
21. ՀՀ Վճռաբեկ դատարանը մեկնաբանել է պաշտոնատար անձի կողմից ձեռնարկատիրական գործունեության և ձեռնարկատիրական գործունեության օրենսդրական արգելքի վերաբերյալ դրույթները (ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշում S-861/2007, 2007թ. օգոստոսի 1): Հղում կատարելով ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 2-րդ հոդվածին՝ ՀՀ Վճռաբեկ դատարանը սահմանել է, որ ձեռնարկատիրական է համարվում անձի ինքնուրույն, իր ռիսկով իրականացվող գործունեությունը, որի *հիմնական նպատակը գույք օգտագործելուց, ապրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ ստանալն է:*

Բացի այդ, ՀՀ Վճռաբեկ դատարանը իրականացվող գործունեության բնույթը (այդ թվում նաև՝ ձեռնարկատիրական լինելը) որոշելու համար սահմանել է 6 հատկանիշների համաժամանակյա առկայության պայման: Այն է՝

- արդյո՞ք գործունեությունն իրականացվել է անձի նախաձեռնությամբ և կամքով,
- արդյո՞ք գործունեությունը կրում է պարբերական բնույթ,
- արդյո՞ք գործունեությունն ի սկզբանե իրականացվել է հատկապես շահույթ (եկամուտ) ստանալու նպատակով,
- արդյո՞ք գործունեությունն իրականացվում է որպես մասնագիտություն (արհեստ), որի արտաքին դրսևորումներից կարելի է համարել առևտրի իրականացման կամ ծառայությունների մատուցման հատուկ տարածքի (խանութ, սրահ, արհեստանոց, այլ արտադրական տարածք, հատուկ հարմարեցված տրանսպորտային միջոց), տեղեկատվական-գովազդային բնույթի միջոցառումների, ապրանքի մեծ քանակության և տեսականու առկայությունը,
- արդյո՞ք քաղաքացու տնտեսական գործունեությունը (քաղաքացիաիրավական գործարքը) վերաբերում է նրա անձնական գույքին,
- այլ առանձնահատուկ հատկանիշներ:

22. Սույն գործով ապացուցված է համարվել, որ թեև Հայկ Մարությանը Երևանի քաղաքապետի պաշտոնը ստանձնելուց հետո պահպանել է «ԿԱՐԳԻՆ

ՍՏՈՒԴԻԱ» ՍՊԸ-ում, «ԿԱՐԳԻՆ ԹԻՎԻ» ՍՊԸ-ում և «ՀԱՅԿՈ ԸՆԴ ՄԿՈ «ԿԱՐԳԻՆ» ՍՊԸ-ում իր բաժնեմասը, սակայն նշված ընկերությունները փաստացի գործունեություն չեն ծավալել, և եկամուտ, շահույթ չեն ապահովել: Օրենքի պահանջի ձևական մեկնաբանությամբ «ԿԱՐԳԻՆ ՍՏՈՒԴԻԱ» ՍՊԸ-ում, «ԿԱՐԳԻՆ ԹԻՎԻ» ՍՊԸ-ում և «ՀԱՅԿՈ ԸՆԴ ՄԿՈ» «ԿԱՐԳԻՆ» ՍՊԸ-ում բաժնեմասը հավատարմագրային կառավարման չհանձնելը հանդիսանում է անհամատեղելիության պահանջի խախտում: Այնուամենայնիվ, հաշվի առնելով, որ նշված ընկերությունները փաստացի գործունեություն չեն ծավալել, ըստ էության, օրենքի պահանջների խախտում չի արձանագրվել:

23. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարույթի արդյունքում Հանձնաժողովն ընդունում է եզրակացություն պաշտոն զբաղեցնող անձի կողմից անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների խախտման առկայության կամ բացակայության մասին կամ համապատասխան պաշտոն զբաղեցնող անձի կողմից վարքագծի կանոնների խախտման առկայության կամ բացակայության մասին:

IV. Եզրահանգում.

Հաշվի առնելով վերոգրյալը և այն հանգամանքը, որ օրենքի պահանջների ձևական խախտման դեպքում օրենքի բովանդակության խախտումից բխող խիստ հետևանքների կիրառումը կսահմանափակի անձի հիմնական իրավունքի իրացման հնարավորությունը՝ Հանձնաժողովը եզրակացնում է.

1. Երևանի քաղաքապետ Հայկ Մարությանի կողմից Հանրային ծառայության մասին ՀՀ օրենքի բովանդակային իմաստով անհամատեղելիության պահանջների խախտում առկա չէ:

2. Սույն եզրակացությունը կարող է բողոքարկվել անձնաժողովի Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դրանք փաստի հիմքով վիճարկելու վերաբերյալ գործերի վարույթի շրջանակում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **ՀԱՅԿՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝ **ԱՐԱՄԱՅԻՍ ՓԱՇԻՆՅԱՆ**

ՆԱՐԵԿ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ԼԻԼԻԹ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ